Արձանագրություն N 5
ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 մարտի 2022թ.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ն. Ավետյանը, Գ. Մելիքսեթյանը և Ս. Ալեքսանյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը

Բանակցությունների վերաբերյալ

ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա ծածկագրով ընթացակարգի 15.03.2022թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած գնի նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցում էին հայտ ներկայացրած «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Եղիկյանը, «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Արիստակեսյանը և «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ինժեներ Մ. Ոսկանյանը:

Ելույթ ունեցավ գնահատող հանձնաժողովի նախագահ Ս. Ասրյանը և բանակցությունների մասնակիցներին ներկայացրեց ընթացակարգի մասնակից Ընկերությունների հայտով ներկայացված գնային առաջարկները:

Բանակցությունների ավարտին մասնակից «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի համար առաջարկվել է 114 000 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) նախկին 114 955 476 ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ) փոխարեն և 4-րդ չափաբաժնի համար՝ 265 920 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), նախկին 285 129 319 ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ) փոխարեն:

Մասնակից «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ-ի կողմից բանակցությունների ավարտին 2-րդ չափաբաժնի համար առաջարկվել է 216 000 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), նախկին 216 750 555 ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ) փոխարեն, որը գերազանցում է ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի նախահաշվային արժեքը:

Ընթացակարգի մասնակիցների կողմից այլ նոր գնային առաջարկներ չեն եղել:

Հանձնաժողովի որոշումը

Բանակցությունների արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա ծածկագրով ընթացակարգի 8.7 կետի է) պարբերությունը (բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած)՝ հրապարակել հայտարարություն ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին:
2. ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների ընտրված մասնակից հայտարարել «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին: 3-րդ չափաբաժնի ընտրված մասնակից հայտարարել «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Ընթացակարգի համար անգործության ժամկետ կիրառելի չէ:

4. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/5-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժինների ընտրված մասնակից «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին և «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ս. Ասրյան
անդամներ	_____	Ն. Ավետյան
	_____	Գ. Մելիքսեթյան
	_____	Ս. Ալեքսանյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան